ԱԼԵՏԱՓԷՐ

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

«ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆՐ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆԾԻ ԳԱՆ» ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Թ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1880 ԹԻՒ 12

ՓՈԿ

Փոկը չրային կաթնասուն անասուն է մտակը, և ունի քանի մը տեսակներ, որ կը տարբերին իրարմէ մեծութեամբ և ձեւով։ Ոմանք փոքր են, երեք կամ չորս ոտք միայն երկայն, այլք կը հասնին մինչև 15 ոտք երկայնութեան, և կու գան տալի քան 600 քաշ։ Փոկը կը տարբերի ուրիշ կաթնասուն անասուններէն իր ոտուըներուն տարօրինակ ձեւովը։ Ունի չորս ոտք, և ոտուընները փակած են իրարու մաշկով, այնպէս որ փոկը կրնայ իր ոտուըները ձկան թևերուն պէս լողալու գործածել։ Բայց այս պաշտօնը կը կատարեն փոկին եռակի ոտքերը միայն, առջևիններուը որ շատ կից են մարմնոյն՝ կը ծառայեն դառնալու։

Փոկը իր մարմնոյն և մանր մէջաեղ ունի թանձր ճարպ, ինչպէս կէտը։ Այն ճարպէն կը հանուի շատ օգտակար իւղ։ Փոկին մարմինը, և տեսակներէն ոմանց մուշտակը, շատ պատուական է, և այս պատճառաւ աշխարհիս շատ ցուրտ կողմերը շատ մարդիկ կը ղբաղին փոկոյ որսորդութեամբ։

Փոկոյ մէկ տեսակը կը կոչուի ծովառիւծ, վասն զի քիչ մը կը նմանի առիւծու։ Ուրիշ մէկ տեսակը կը կոչուի ծովարջ, դարձեալ ուրիշ մէկ տեսակը կը կոչուի ծովափիղ։

Այս անասունը կ'ուտէ ղլխաւորապէս ձուկ, և կրնայ չորս տակ ճիայ իրը քսան րոպէ։ Կը սիրէ ջուրէն դուրս քարերու կամ սառուցի կտոր-

ԴՈՅՈՆՑ

Ա՛ր ջան քեզ, որ ինձ ասես, թե ինչ է սէրը, ես չեմ գիտեր, ինչպէս որ չեմ գիտեր, թէ ինչ է կեանքը, ինչ է մահը, ինչ է հոգին, ինչ է մարմինը, ինչ է ուրախութիւնը, ինչ է տրտմութիւնը, ինչ է ցաւը, ինչ է հաճոյքը, ինչ է ատելութիւնը, ինչ է նախանձը, ինչ է ամօթը, ինչ է պատիւը, ինչ է անարգանքը, ինչ է ամբարտաւանութիւնը, ինչ է խոնարհութիւնը, ինչ է ամբարշտութիւնը, ինչ է աստուածապաշտութիւնը, ինչ է ստութիւնը, ինչ է ճշմարտութիւնը, ինչ է ազատութիւնը, ինչ է ստրկութիւնը, ինչ է ազնուականութիւնը, ինչ է ստորնութիւնը, ինչ է ազնուութիւնը, ինչ է անազնուութիւնը, ինչ է ողորմութիւնը, ինչ է անողորմութիւնը, ինչ է ամենայն ինչ, որ ես ինձ մէջ զգում եմ, ինչպէս որ չեմ գիտեր, թէ ինչ է դուրսի աշխարհը, ինչ է ամենայն ինչ, որ ես դրսի աշխարհում տեսնում եմ, ինչպէս որ չեմ գիտեր, թէ ինչ է ամենայն ինչ, որ ես ինձ մէջ եւ դրսի աշխարհում զգում եմ, ինչպէս որ չեմ գիտեր, թէ ինչ է ամենայն ինչ, որ ես ինձ մէջ եւ

թերթերուն մէկ երեսը , և թերթերը մեքենային միջոցաւ մամլէն դուրս տարուելով կը դիզուին տախտակի մը վրայ : Ան յա կերպով կը պատրաստուի նաև միւս երեսին կազապարը , որ կը տպուի իւրաքանչիւր թերթի միւս երեսին վրայ : Տպուած թերթերը չորնալէն եառքը կը դրուին ստուար թըղթոյ թերթերու մէջտեղ և կը ճնշուին ուրիշ մամլոյ մը տակ , այնպէս որ լրագրին երեսները կ'ըլլան ողորկ և փայլուն : Լրագիրներն այսպէս պատրաստուելէն եառքը կը ղրկուին ընթերցողներուն :

Երբ թերթ մը կը տպուի , գրաշարը կը ցրուէ կազապարին տառերը և կը դնէ իւրաքանչիւր իւր խորշին մէջ նորէն գործածելու համար ի հարկի :

Տեսաք ուրեմն որ լրագիրը մը ինչ մեծ աշխատութեամբ կը շինուի , ուսոի և կը յուսամ թէ այսուհետև ա ւելի պիտի ճանչնաք լրագրի յարգը : Գրաշարն մեծ պատեհութիւն ունի բան մորվելու և ըլլալու բաւական հմուտ շատ բաներու : Բենիամին Ֆրանքլին , Ամերիկացի փիլիսոփան , պատանեկութեան տարին տպագրչի մը աշակերտ էր . նոյնպէս երևելի անձանց շատերն սկսան իրենց ուսումը և դաստիարակութիւնը գրաշարի գասի առջև :

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՎԱՅՐԵՆԻ

Երբ Կոլոմպոս գտաւ Ամերիկա 1492ին , այն երկրին մէջ կը բնակէին այս պատկերին մէջ նկարուած մարդուն նման մարդիկ , որ կ'ապրէին որսով և ձկնորսութեամբ , ունէին վայրի անասնոց մորթէ հանդերձներ , չունէին ոչ գիրք , ոչ տուներ բնակութեան համար , և ոչ կրօնք : Բայց հիմա ասոնց թիւը շատ նուազած է : Շատերը քրիստոնեայ եղած են , և հաւանական է թէ քիչ ժամանակէն Ամերիկայի այն մասին վայրենիներուն մէջ հեթանոս պիտի չմնայ :

ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆԸ ԿԸ ՀՈԳԱՑ

Կարապետ և Սարգիս շատ երջանիկ էին երբ անոնց հօրեղբօրորդին Մինաս երկու մաքուր և գեղ սպիտակ ճագար բերաւ անոնց :

Անոնց բարի հայրը ոչ միայն թոյլ տուաւ անոնց պահել այն երկու սիրուն անասունը , այլ և մտածեցին մէկ անկիւնը պատուհանին մօտ մեծ և գեղեցիկ բոյն մը շինեց ճագարներուն համար :

"Եթէ ուրիշ անգամ այցելութեան գալով ձեզի , տեսնեմ որ ," ըսաւ Միհնաս , "հոգ չէք տանիր այս փոքրիկ անասուններուն , ետ կ'առնում :"

Կարապետ և Սարգիս խոստացան ամէն կերպով հոգ տանիլ ճագարներուն , և արդարև կատարեցին իրենց խոստումը ժամանակ մը : Առաւօտուն կանուխ կ'երթային իրենց տանը մօտ դաշտ մը , և առուտուր գալար և մատաղ դալուխները քաղելով կողովի մը մէջ , կը բերէին կու տային ճագարներուն :

Բայց երկու տղայք կամաց կամաց ձանձրացան և թուլցան , և երբ անոնց մայրը հարցուց օր մը ըսո վրութեան , "ճագարներուն կերա կուրը տուի՞ք այս առաւ ," Սարգիս և կարապետ իրարու երես նայեցան , և մին պատասխանեց , "Այսօր չտուինք , մայր , բայց երեկ շատ ա ռատ տուինք , նաև քիչ մը կաղամբի տերև :"

Հետևեալ օրը մայրն ըսաւ անոնց , "երեկ առատութեամբ տուի ձեր ա ռաւօտեան ճաշը , նաև երեկոյին քիչ մը բան , ուստի այսօր լինէ կերակուր մի սպասէք , ինչպես որ դուք ամէն օր ուտելիք չէք տար ճագարներուն , նախընթաց օրուանը բաւական հա մարելով :"

Մայրը պատառ մը հաց անդամ չտուաւ անոնց , մինչև որ ճագարները կերակուրը տուին :

Մօրը այս յանդիմանութիւնն աղ դեցութիւն ըրաւ երկու տղոց քանի մը օր միայն և ոչ աւելի :

Օր մը անոնց մեծ քոյրը Մաննիկ խնձոր առնելու համար մատանը մնալով տեսաւ որ ճագարները կերակուր չու նէին , և Սարգսի անհանգարտ փոքրիկ շունը ճագարներուն վանդակա պատ բունին առջև կեցած էր և կը հաչէր կատաղաբար ճագարներուն դէմ , և երկչոտ անասունները բու նին մէկ անկիւնը քաշուած կը դողային :

Մաննիկ մատանէն դուրս ըրաւ շունը , և դանելով տղաքն ըսաւ ա նոնց . "Տղայք , մեղք է և ամօթ ձեզի թշուառ անասնիկները թողուլ այսպէս անխնամ : Սարգսի շունը մա ռանը մտած էր և կը հաչէր անոնց դէմ : Հայրս ձեզի չպատուիրե՞ց որ ճագարներուն քով չթողուք շունը :"

"Ի՞նչ կայ "ըսաւ կարապետ ," քանի մը րոպէ միայն ձեց շունը մատանը :" "Ծաղրելի է" ըսաւ Սարգիս "մեղք համարել շուն մը հալեցնել , և ճա գարները քանի մը ժամ առանց կե րակուր թողուլ . մօրս պիտի հարցունեմ տեսնեմ իրաւ մե՞ղք է :"

Այսպէս երեք տղայք միաբեղ գացին հարցունել իրենց մօրը : "Ձեզի քանի մը տուն կարդամ Սուրբ Գիրքէն ," ըսաւ մայրը , "յետոյ հարցունեմ ձեր կարծիքը :

Երբ տղայք իրենց մօրը կը հար ցունէին թէ այս ինչ բանը մեղք էր թէ ոչ , մայրն խոկոյն Աստ կամ Ոչ պատասխանը կու տար . ուս տի այս անգամ անոր անորոշ պատասխանը լսելով , Մաննիկ ախորժաբար կարծելով թէ իրեն նպաստաւոր չէր մօրը կարծիքը , և Սարգիս կ'ուրախանար կար ծելով թէ յաղթեց : Մայրը բա նալով իւր հին Աստուածաշունչը , կարդայ սա համարը .

"Արդարը իր անասուններուն կենացը համար հոգ կը տանի" (Առակ . ԺԲ . 10) :

"Արդ ," ըսաւ , "երբ կը թողուք որ անասուն մը առանց հարկի քաղց , ցաւ կամ երկիւղ կրէ , հոգ տարած չէք բլլար անոր կենացը , ուստի և արդար չէք : Եւ Աստուած անասուններդ տուած է մեզի ոչ թէ չարաչար , այլ մեր օգտին համար վարելու զա նոնք : Աստուած կը խնամէ զանոնք , և ասով կը ցուցնէ թէ նաև մենք խնամ տանելու ենք անոնց : 'Անիկա անասուններուն համար խոտ կը բուսցնէ : Անասուններուն իրենց կերակուրը կու տայ , ու ագռաւին ձագերուն՝ որ կ'աղաղակեն' (Սաղմ . ՃԴ . 14 . ՃԽԷ . 9) : Երբ Աստուած նոյն հետ ուխտ ընելով իւր աղեղը դրաւ ամպերուն մէջ , իւր ուխտը հաս տատեց նոյն հետ եղող 'ամէն շնչաւոր կենդանիին հետ ,' թռչնոց և անասնոց և երկրի բոլոր գազաններուն

հետ։ Նաև Քրիստոս ըսաւ. «Չէ՞ որ երկու ճնճղուկ մէկ դանկի կը ծախուին, և անոնցմէ մէկը քեզմէ չկայ առանց Հօրը» (Մատթ. ժ. 29)։ Կը կարծէք թէ այն որ ստեղծեց ամէն կենդանի, և որ չնչին ճրենճղուկներու վրայ անգամ կը հսկէ, պիտի հաճի՞ որ մարդիկ Թողուն այն անասուններըը որոց խնամ տանելպարտական են։ Մի՛թէ կը սիրէ՞ Աստուած զանոնք որ կը չարչարեն թշուառ անասունները, կամ կը Թողուն որ չարչարուին, երբ կրնան դիւրաւ օգնել անոնց։»

Երբ մայրը դադրեցաւ խօսելէ, տղայք ամենևին պատասխան չտուին. ուստի մայրը հարցուց Կարապետին. «Ի՞նչ կ'ըսես, Կարապետ։»

«Կարծեմ թէ,» ըսաւ Կարապետ, «Աստուած պիտի բարկանայ, եթէ անօթի թողում ճագարները։»

«Դո՞ն ինչ կ'ըսես, Սարդիս,» ըսաւ մայրը Սարդսի։

«Ես միշտ պիտի չմտածեմ յիշել, մայր,» ըսաւ Սարդիս, որ մեր երկնաւոր Հայրը կը հսկէ միշտ իւր բոլոր արարածներուն վրայ։»

«Այո,» ըսաւ կարապետ, «Մանկիկ իրաւունք ունէր։ Անասուններն անխնամ թողուլ կամ չարչարել մեղք է, մանաւանդ փոքրիկ անասունները որ անկարող են պաշտպանել զիրենք. ուստի կ'ուզեմ մօրմ այս օրուան խրատը յիշել միշտ։»

ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԴՆԵԼ

Գանի մը օր առաջ երկու խնձորավաճառ մտուկով խնձոր կը տանէին կոստանդնուպոլսէ Ղալաթիա։ Երբ կամուրջին գլուխը հասան, խնձոր մը ինկաւ գետինը, և մարդիկը չխնացան։ Փոքրիկ գաղթական (մուհաճիր) աղջիկ մը որ արծաթ դրամ պղնձէ փոխելով կը հոգար իր ապրուստը՝ խնձորը գետնէն առաւ, և վրան նայեցաւ վայրկեան մը, անտարակոյս վարանելով Թէ պահե՞ր խնձորը Թէ դարձնէր տիրոջը։ Աղջկան վարանումը երկար չտևեց. չուտով մարդոց ետևէն վազելով խնձորը նետեց մտուկին մէջ։ Շատ ուրախ կ'երևար աղջիկը, որպէս Թէ կը լսէր իւր խղճին ձայնը որ կ'ըսէր անոր, «Աղեկ ըրիր։» Ոչ ապաքէն, եթէ օտարին խնձորը պահէր և ուսեր, այնպէս գոհ պիտի չըլլար աղջիկը, որչափ եղաւ խնձորը տիրոջը տալէն ետքը։

ԹՌՉՈՒՆ ՄԸ

Ահա երջանիկ Թռչուն մը։ Ձմեռը եկած է, և ձիւն կը տեղայ, բայց նա անհոգ է։ Գիտէ Թէ ձմեռը պիտի անցնի և գարունը պիտի գայ նորէն, ուստի կը նստի անտերև Թուփին վրայ և կը գեղգեղէ իւր ընտրեալ երգը։ Այսպէս և մենք փորձութեան մէջ օրեր սպասենք գեղեցիկ ժամանակի, և երախտագէտ սրտիւ յիշենք անթիւ պարգևները զորս կը վայելենք միշտ։

ՊՏՈՒՂ ԲԵՐԵԼ

Երկրագործք և պարտիզպանք գարնան և ամառուան ամիսներուն մէջ կը փափաքին դիտել Թէ ինչ պիտի հնձեն և քաղեն աշնան։ «Մեր աշխատութեան արդիւնքն ի՞նչ պիտի ըլլայ,» կ'ըսեն իրարու։

Գան ձայս աւելի կարևոր խնդիր այս է. Մե՛նք ի՞նչ պտուղ կը բերենք։ Մի կարծէք, տղայք, Թէ դեռ փոքր էք, ուստի և ձեր ժամանակը չէ պտուղ բերելու։ Այսպէս կարծելով կը խաբուիք։ Արդարև փոքր ծառեր այնչափ պտուղ չեն կրնար բերել որչափ մեծ ծառերը, բայց մեծ ծառերուն պտղոյն պէս քաղցր և հիւթեղ է նաև փոքր ծառոց պտուղը։ Տղայ մը որ կը բանայ իւր սիրտը Հոգւոյն Սրբոյ ընակութեան իբրև արևու, և որ կը կրթէ իւր սիրտը Սուրբ Գրոց ուսմամբ, կը բերէ Հոգւոյն պտուղներն այնպէս՝ ինչպէս հասուն այր մը կամ կին մը։

Նախ՝ կրնաք բերել «չրթանց պտուղ»։ Պաղոյ գեղեցիկ տեսակներէն մէկն է այս։ Գիտէք ինչու համար. վասն զի բարի է և աստուածահաճոյ, որ չնաք միշտ հանել ձեր բերնէն ախորժելի և քաղցր, սուրբ և օգտակար խօսքեր. ի՜նչ գեղեցիկ պտուղ է այս։ Սիրտը կը ճանչցուի բերնէն, ինչպէս ծառը կը ճանչցուի պտղէն։ Ապա ձեր չրթանց պտուղը, ձեր խօսքը, պիտի ցուցնէ Թէ ձեր սրտին հոգը միակուա՞ծ է Աստուծոյ չնորհքը Թէ ոչ։

Երկրորդ՝ կրնաք պտուղ բերել վարքով, այսինքն ամէն օրուան կենցաղավարութեամբ։ Չոս խնդիրը ոչ Թէ խօսելու, այլ գործելու վրայ է։ Ձեր վարքը կրնայ ըլլալ անպիտան ծառի մը պէս որոյ տերևները դեղնած և Թափած են և պտուղը չր և անհամ. բայց կրնայ ըլլալ նաև գեղեցիկ ծառոյ նման ոստախիտ, տերևաչատ և պտղաբեր։ Այսինքն երբ ոչ միայն ձեր խօսքերն ախորժելի և քաղցր են, այլ և ձեր գործերն օգտակար և հաճոյ ամենուն։ Տղայք բարիք ընելու պատեհութիւն ունին աւելի քան զոր կը կարծեն։ Կրնան օգնել իրենց ծնողաց, իրենց վարժապետներուն, իրենց հասակակիցներուն։ երբ Աստուծոյ հաճոյ ըլլալու համար այսպէս կ'ընեն, են բարի պտուղ բերողք։

Կարծեմ կը յիշէք Քրիստոսի խօսքը. «Այսով իմ Հայրս փառաւորուեցաւ, որ դուք շատ պտուղ բերէք, ու իմ աշակերտներս ըլլաք» (Յովհ. ժե. 8)։ Ապա կը տեսնէք, սիրելի տղայք, որ կրնաք պտուղ բերել շրթամբք և վարուք ի փառս Աստուծոյ, և այսու պիտի տեսնուի Թէ, Թէև դեռ տղայ էք, աշակերտ էք Քրիստոսի։ Երանի՛ Թէ ամէնքդ ալ ըլլաք բարեպտուղ աշակերտներ ձեր փրկչին Յիսուսի։

Ամերիկայի Միսիոնարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր Ա. Ռ. ԿԻՒՆ
Տիէզանդըլար Եօգուշլու, Ամերիգան խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ